

«ՍԻՈՆ»Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս Ի Ջ Ի Ն Ք

Թէհրանէն Պր. Մ. Ս., Սիոնի կմբա-
գրութեան ուղարկած իր փետր. 16 թուա-
կիր նամակին մէջ կը գրէ.

«Կը փափաքեմ իմանալ Միջինք բուսա-
ծը, այսինքն մեծ պահքի ճիշդ մէջնեղի
չորեքշաբթի օրը, կրօնական, եկեղեցա-
կան տեսակէտով ի՞նչ նշանակութիւն
ունի կամ կրնայ ունեցած ըլլալ անցեա-
լին մէջ. հաւատացեալ հայ ժողովուրդին
որ եւ ըսն կը թելադրէ՞ կամ կը պար-
տադրէ՞ այս առթիւ. ի՞նչ են եղած ընդ-
Պանրոպէս մեր աւանդական սովորու-
թիւնները այս օրուան համար եւ այլն:
Նաեւ կարելի՞ է ընդունիլ այս օրը իբր
ուրախութեան եւ խրախճանքի օր նոյն
իսկ անոնց համար որոնք ոչ ծոմ եւ ոչ
աւպահք պահած են մեծ պահքին օրերը:
Շատ շնորհապարտ պիտի կացուցանէք
զիս եթէ բարեհաճէք այս մասին փոքր
բացատրութիւն մը տալ Սիոնի յառաջի-
կայ մէկ թւին մէջն:

են հանգստաւէտ բնակարաններ, Նիկիային
էջմիածնի բնակչութեան թիւը հասնում է
մօտ 20,000-ի:

Քաղաքի գետինների վրայ տեղաւոր-
ուած են «Ելիսոփ Միլիոնատէր» եւ մի քանի
արդիւնարեւրական ձեռնարկներ, շրջանային
եւ բաւական թուով կրթական հիմնարկներ,
ինչպէս Մանկավարժական Տիւնիկուսը եւ
երաժշտական դպրոցները: Մշակութային
զարգացման հիմնարկների շարքում կարելի
է նշել Կոլիսոփ (Մշակոյթի Տունը, բանաս-
տեղծ Յովհաննէս Յովհաննէսեանի Տուն-
թանգարանը, սինէմայի շէնքը եւ հանրային
պարտէզը՝ մշակոյթի եւ հանգստի համար):
Այսպէսով, էջմիածինը վերափոխուում է եւ
դառնում Հայաստանի Հանրապետութեան
ծաղկող քաղաքներից մէկը:

ՎԱՐՍԱՋԻԱՏ ԹԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ
(ձարսարապէս)

Թրգմ. ԳՐԻԴՈՐ ԱԼԵԱՆԱՔՔ՝ Պաղտա

Յարգելի նամակագրին հարցադրու-
թիւնը չափով մը գոհացուցած ըլլալու
համար կու տանք հետեւեալ ծանօթութիւն-
ները եւ բացատրութիւնները:

Եկեղեցական տեսակէտէ Միջինքի չո-
րեքշաբթի յիշատակելի է անով որ ա՛յդ
օր կը սկսի երգուիլ մէկ տուն ստեղի
շարական խաղաղական ժամերգութեան
վերջը:

Աղաղակական տեսակէտէ կ'արժէ յիշել
թէ կորէ մը հոյակապ գաւառներու մէջ
սովորութիւն կար որ նշանուած երիտա-
սարդներու տուններէն իրենց հարսնե-
ցուին տունը փոքր նուէր մը կը զրկուէր
այդ օրը: Կրնե՞ն ալ կը պատրաստէին
պահոց յատուկ քացառիկ կերակուրներ,
մանաւանդ անուշեղէններ, կամ հատիկ
— խաշած ցորեն — խառնուած ընկոյզով
եւ շաքարով:

Միջինքի յատուկ ուրախութիւնները
իրաւունքն են անոնց՝ որոնք պահքի եւ
արամութեան օրերը կէս ըրած են եւ հասած
յիշատակելի հանգրուանի մը: Իսկ անոնք
որոնք մեծ պահքի շրջանին ոչ ծոմ եւ ոչ
ալ պահք պահած են մինչեւ այդ օր, եթէ
այդ օրը իրենց սովորական սահմանադանց
խրախճանքներէն հրաժարելով ուղեն մաս-
նակցիլ պահեցողներուն օրինակսը ուրա-
խութեան, այդպիսիներուն մասնակցու-
թիւնը կարելի չէ մերժել: Թերեւս ասիկա
առիթ մը կը հանդիսանայ որ իրենք ալ
խառնուին պահեցողներու խումբին եւ միտ-
սին շարունակեն պահել մինչեւ Զատիկ:

Հաւատացեալ հայ ժողովուրդին ուղ-
ղուած թելադրութիւն մը եթէ ուղենք
գտնել Միջինքի մէջ, այդ պիտի ըլլար
յարատեւութիւն պահեցողութեան մէջ,
զգուշանալով ոչ միայն արգիլուած կե-
րակուրներ ձուլակելէ, այլ նաեւ զգուշա-
նալով արգիլուած խօսքեր — հայոցու-
թիւն, անէծք, սուտ, երգում եւ այլն —
արտաբերելէ, եւ արգիլուած գործեր —
գողութիւն, յափշտակութիւն, կռիւ եւ
այլն — ընելէ: Եւ այսպիսի պահեցողու-
թեան մը թելադրութիւնը կը կարծենք
թէ անարժէք չէ:

Ն. Ե.